ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «25» նոյեմբերի, 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 42-Ա/Ք

ԳԵՎՈՐԳ ԱՐԱՄԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՏՎՈԳԻՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 12-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Արամի Պողոսյանին շնորհել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի պատվոգիր՝ գիտության ոլորտի զարգացման գործում ունեցած հաջողությունների և զգալի ավանդի, ինչպես նաև գիտական և վարչարարական արդյունավետ գործունեության համար:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ